ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ «ԻՍԿՐԻ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ (1914-1915թթ.)

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, երբ XX դարի սկզբներին, օսմանյան պետության հայատյաց քաղաքականության արդյունքում սրի մատնվեց և սեփական հողից արտաքսվեց մոտ 2 միլիոն մարդ, զայրույթի ալիք բարձրացրեց քաղաքակիրթ աշխարհում: Արձագանքները՝ դարի հանցագործության վերաբերյալ, հեղեղեցին եվրոպական, ամերիկյան և ռուսական մամուլը:

Ռուսաստանյան պարբերականներն Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատի բացումից հետո, ավելի հաճախ սկսեցին տպագրել նյութեր Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի արևմտյան հատվածի կացության մասին: Սկսած 1914թ. աշնանից, երբ Ռուսաստանը և օսմանյան Թուրքիան հայտնվեցին միմյանց դեմ պատերազմական վիճակում, տարաբնույթ՝ օբյեկտիվ և ոչ այնքան (կախված լրատվական միջոցի ուղղվածությունից) բազմաթիվ նյութեր են տպագրվում մամուլի այնպիսի հայտնի և ազդեցիկ օրգաններում, ինչպիսիք էին «Ռուսկիե վեդոմոստի», «Պետերբուրգսկիե (Պետրոգրադսկիե) վեդոմոստի», «Ռուսկոյե սլովո», «Նովոյե վրեմյա», «Վեստնիկ Եվրոպի», «Լետոպիս» և այլ պարբերականները:

Մասնավորապես՝ 1914-1915թթ. ռուս-թուրքական պատերազմին, Կովկասյան ռազմաճակատում գործողություններին, արևմտահայության վիճակին անդրադարձել է նաև մոսկովյան «Ռուսկոյե սլովո» թերթի «Իսկրի» նկարագրդ գեղարվեստա-գրական ամենշաբաթյա կիրակնօրյա հավելվածը:[1] Այն հրատարակվում էր 1910 թվականից, հեղինակավոր գործիչ և հրատարակիչ Ի.Սիտինի ընկերության կողմից, լայն տարածվում էր ոչ միայն Մոսկվայում, այլ նաև Ռուսաստանի մյուս մեծ քաղաքներում, բարի համբավ ուներ մտավորականության և այլ խավերի շրջաններում: Ծանոթությունը շաբաթաթերթի նյութերի հետ վկայում է նրա, իրոք, բարձր գեղարվեստական մակարդակի և հասարակական-քաղաքական արժեքի մասին:

Ի դեպ նշենք, որ և մինչև պատերազմ մոսկովյան այս հրատարակությունը ժամանակ առ ժամանակ լուսաբանել է հայկական կյանքը: Այսպես, 1912թ. հոկտեմբերյան հա-

մարներից մեկում (N42) զետեղված է մի մեծադիր լուսանկար և թղթակցություն «Հայկական հանդիսություններ» վերնագրով՝ Կոստանդնուպոլսում հայոց գրերի 1500 և հայ տպագիր գրքի 400-ամյակներին նվիրված տոնակատարությունների մասին:

1914թ. ամռանը սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, իսկ արդեն նոյեմբերի 9-ին «Իսկրի»-ն «Ռուս-թուրքական պատերազմը» հաղորդագրության մեջ գրում է. «Թուրքա-գերմանական նավատորմի ուխտադրուժ հարձակումը հոկտեմբերի 16-ին մեր սևծովյան խաղաղ քաղաքների վրա ստացավ արժանի պատասխան Ռուսաստանի կողմից: 20-ին՝ հաջորդեց Թուրքիային պատերազմ հայտարարելը: Մեր կովկասյան զորքերն անցան սահմանը և հոկտեմբերի 21-ին գրավեցին Բայազետ թուրքական ամրոցը: Թուրքիայի հետ նախորդ պատերազմների ժամանակ մեր զորքերը մեկ անգամ չէ, որ արդեն վերցրել էին այդ ամրոցը, բայց ամեն անգամ, եվրոպական դիվանագիտության ճնշման տակ, մենք ստիպված ենք եղել խաղաղություն կնքելիս վերադարձնել այն Թուրքիային...»:[2] Թղթակցությանը կցված է Բայազետի ամրոցի տեսարանը:

Ռուս-թուրքական պատերազմի սկիզբը արևմտահայության և ռուսահայության մեջ մեծ ոգևորություն է առաջացնում՝ ողջ աշխարհի հայությունն ակնկալում էր, որ ռուսական զինուժի օգնությամբ հայ ժողովուրդը վերջապես կթոթափի բազմադարյա թուրքական լուծը և Արևմտյան Հայաստանն ինքնավարություն կամ, նույնիսկ, անկախություն ձեռք կբերի: Հայկական կամավորական շարժումը, աջակցություն ստանալով ռուսական կառավարության կողմից, մեծ թափ է առնում: Դեպի Կովկասյան ռազմաճակատ են շտապում հայրենասեր և խիզախ հայորդիներ: Իսկ ովքեր ի վիճակի չէին զենքը ձեռքին օգնության գալ արևմտահայությանը, աջակցում էին նյութական և այլ միջոցներով...

Առաջին նյութը, որը տպագրվում է «Իսկրի» շաբաթաթերթում հայերի մասին արդեն պատերազմական շրջանում, ոգեշնչող վերնագիր ուներ՝ «Ազատագրման նախօրեին»: Այն տպագրվել է 1914թ. նոյեմբերի 23-ի համարում:

«Մեր թվարկության առաջին դարերին քրիստոնեություն ընդունած, երկուհազարամյա մշակույթ ունեցող, հինգ դարերի ընթացքում թուրքերի անմարդկային, վայրենի տիրապետությունը տանող բազմաչարչար հայ ժողովուրդը վերջապես հասավ իր ազատագրման լուսաբացին, - գրում է պարբերականը, – Ծնորության պահին Թուրքիան գնաց իր ճակատագրին ընդառաջ: Մեզ իր հանդուգն մարտահրավերը նետելով, նա ամբողջությամբ հերթի դրեց արևելյան հարցը: Ոչ մի բարեփոխումների մասին խոսք անգամ չի կարող լինել: Դաշնակիցները (Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը – Ռ. Բ.) իրենց վրա կվերցնեն Թուրքիայի կողմից ճնշված ժողովուրդների ազատագրման գործը, և ռուսական արծվի հովանու տակ հայկական գավառները խաղաղ զարգացման հնարավորություն կստանան»:[3]

Այս նյութն ուղեկցվում էր հարուստ իլյուստրացիոն շարքով՝ 11 լուսանկարները և գծանկարները ռուս ընթերցողին բավականի լայն պատկերացում էին տալիս Արևմտյան Հայաստանի պատմության և մշակույթի, ազատագրական շարժման և նրա հերոսների մասին: Բոլոր նկարներն ուղեկցվում էին մեկնաբանություններով:

Իլյուստրացիոն նյութի առատությունը, ծավալուն տեքստային մեկնաբանությամբ բխում էր, իհարկե, հենց պարբերականի բնույթից. եր-

բեմն, մեկ-երկու արտահայտիչ լուսանկարները կամ գծանկարներն ավելի խոսուն էին և ավելի լայն արձագանք էին ստանում ընթերցողի մոտ, քան ծավալուն հոդվածները: Դրանց թվին կարելի է դասել, օրինակ, շաբաթաթերթի 47-րդ համարում (1914թ. նոյեմբերի 30-ը) տպագրված մեծաղիր լուսանկարը՝ «Հայկական ջոկատներ» վերնագրով, ուր պատկերված էին երկրորդ հայկական ջոկատի զինվորները՝ ռազմաճակատ մեկնելուց առաջ:

1915թ. հունվարյան համարներում լույս են տեսնում հուսադրող վերնագրերով («Թուրքերի ջախջախումը» (N1), «Թուրքերի նոր ջախջախումը» (N4) և այլն) նյութեր, ուր գտնում ենք ծավալուն հաղորդագրություններ և թղթակցություններ ռուսական բանակի հաղթարշավի մասին: Հայությանը հոգեհարազատ էին այս լուրերը...

«Ազանքյոյից, Սարիղամիշից և Արդահանից հետո թուրքական բանակի գլխավոր ուժերը կրեցին նոր վճռական պարտություն Կարսուրդանի մոտ»[4], - գրում է «Իսկրի»-ն, ոգևորությամբ նկարագրելով թուրքերի փախուստը ռազմի դաշտից, նրանց մի քանի գնդերի ջախջախումը և գերումը... Թղթակցություններն ուղեկցվում էին արտահայտիչ լուսանկարներով: Փետրվարի 1-ի համարում՝ տրված է հաղորդագրություն կայսր Նիկոլայ II-ի՝ Սարիղամիշ այցելելու մասին (1914թ. դեկտեմբերին):[5] Այս այցը ոգևորել էր ոչ միայն ռուսներին, այլև հայերին:

Հաջորդ փետրվարյան համարում ևս անդրադարձներ կան՝ առնչվող ռուս-թուրքական պատերազմի թեմային: «Դեպի Ցարգրադ: Դեպի՛ ազատ ծով» վերնագրի տակ շաբաթաթերթը գրում է. «Մեր թշնամիների կողմը կանգնեց Թուրքիան, բայց նրա զինված ուժերը արդեն կոտրված են փառապանծ կովկասյան զորքերի կողմից և ավելի հստակ ուրվագծվում է մեր առջև Ռուսաստանի պատմական լուսավոր ապագան այնտեղ, ծովի ափերին, Ցարգրադի (Կոստանդնուպոլսի – Ռ. Բ.) պատերի տակ»:[6] Ի դեպ, այս տողերը քերված են Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Ի. Գորեմիկինի ճառից, որը նա արտասանել էր Պետական Դումայի 1915թ. հունվարի 27-ի նիստում: Հայերը նույնպես ոգևորված էին այդ իրադարձություններով... Նույն համարում ուշագրավ է ևս մի նյութ «Ուրմիայի մարզում» վերնագրով: Ծանոթացնելով Պարսկաստանի այս շրջանին, «Իսկրի»-ն տալիս է բավականի ծավալուն ազգագրական, աշխարհագրական և պատմագրական տեղեկություններ, փաստորեն, Պարսկահայաստանի մասին, հայտնում, որ այդ տարածքը թուրքական ազդեցությունից զերծ պահելու համար ռուսական կառավարությունը հաստատել է այստեղ իր առաքելությունը, որի նպատակն է ոչ միայն պաշտպանել «ռուսական առևտրական շահերը» Պարսկաստանի այս մասում, այլև «հոգ տանել երկրի քրիստոնեական բնակչության մասին»: Նշվում է, որ «տեղացի բնակչության թվում շատ կան հայ կաթողիկներ և այսորներ», իսկ քրդերն այստեղ պահպանվել են իրենց «մաքուր տեսքով» և «առանձնանում են վայրենիությամբ և օտարացածությամբ»:[7]

Շատ շուտով, սակայն, ոգևորիչ և հուսադրող նյութերը տեղի են տալիս տագնապալից հոդվածների: Շաբաթաթերթի 10-րդ համարը տխուր լուրեր է հայտնում: «Հայկական գաղթականները» ծավալուն նյութում կարդում ենք առաջին հայ փախստականների խմբերի մասին, որոնք Արևմտյան Հայաստանից հասել էին Իգդիր: Այստեղ էր գտնվում Համառուսաստանյան զեմստվաների միության դաշտային բժշկասանդղային ջոկատներից մեկը: (Ի դեպ, նրա կազմում էր աշխատում, որպես գթության

քույր, մեծ ռուս գրող Լև Տոլստոյի դուստր Ալեքսանդրա Տոլստայան): Ռուսներն Իգդիրում բացել էին 45-տեղանոց մի հոսպիտալ, տեղացի բնակչության համար կազմակերպել ամբուլատորիա, հացի փուռ և այլ կենցաղային ծառայություններ: «Ջոկատի անձնակազմը ձգտում է, ինչքան հնարավոր է, թեթևացնել հայ գաղթականների վիճակը, - գրում են «Իսկրի»-ն: - Բժիշկները այցելեցին նրանց, նշանակեցին բուժում և կարգադրեցին կերակրել նրանց, ովքեր չունեին իրենց սնունդը: Կեղտոտ, հյուծված, համարյա բոլորը հիվանդ, հազիվ ծածկված ճչացող գույնզգույն և կեղտոտ ցնցոտիներով, այդ մարդիկ ճնշող տպավորություն են թողնում: Եվ պատկերացրեք միայն, որ այս կերպ հագնված, նրանք պետք է 150-200 վերստ անցնեին, այն էլ սարերով, ուր խորը ձյուն է նստած և 15-20 աստիճան ցուրտ է: Իգդիրով անցել է 30-ից 40 հազար գաղթական: Հենց որ պատերազմը սկսվեց, քրդերը հայերի նկատմամբ սկսեցին ցուցաբերել անխնա դաժանություն՝ տղամարդկանց սպանում էին, կանանց տանում... Մի հիվանդ կին պատմում էր Ալեքսանդրա Տոլստայային, թե ինչպես իր առաջ սպանեցին ամուսնուն, երեխաներին, իսկ իր ազգականուհու ներկայությամբ մորթեցին ամուսնուն, հորը, եղբայրներին... Նա աղաչում էր քրդերին սպանել և իրեն, բայց նրան պատասխանեցին, որ նա դեռ իրենց պետք է և տարան իրենց հետ...»:[8]

1915թ. մայիսյան օրերին, ինչպես հայտնի է, վասպուրականցի հայությունը ոգևորված էր ծավալվող իրադարձություններով: Այն արձագանք է գտնում նաև մի շարք ռուսական պարբերականներում:

Մեծածավալ «Վանի գրավումը» վերնագրով նյութում «Իսկրի»-ն գրում է. «Մայիսի 6-ին մեր զորքերը գրավեցին Վանը: Գործողությունը Վանի դեմ անցկացվել է փայլուն:Ապրիլի 24-ին գեներալ Ն.-ի ջոկատը, սարսափելի բուք ու բորանի միջով, արագ անցավ Թափարիզի լեռնանցքը և շարժվեց դեպի հարավ: Թուրքերը մի քանի անգամ փորձեցին փակել ճանապարհը՝ նրանց դեմ հանելով համիդիե ջոկատները և ամրանալով անհասանելի դիրքերում: Համիդիե հեծյալների գրոհները ջախջախվում էին կազակների հարվածների տակ: Հետևակը և հրետանին, կազակները և հայ կամավորները մի քանի անգամ դուրս մղեցին թուրքերին դիրքերից և 6-ի երեկոյան, մարտերից հետո, հեծյալների առաջատար ջոկատներն առանց կրակոցի մտան Վան»:[9]

«Թուրքերի և քրդերի մի մասը առագաստանավերով փախավ Վանից արևմուտք, - շարունակում է շաբաթաթերթը: - Լճի համարյա ողջ հյուսիսային և արևելյան ափի մեծ մասը՝ մեր ձեռքերում է: Թուրքական զորամասերը,որոնք նահանջել են Սարայից և տեղակայվել թուրք-պարսկական սահմանում, մնացել են լեռնային հովիտներում և ձորերում: Նրանց վիճակը օրհասական է և նրանք հազիվ թե դուրս պրծնեն: Թիֆլիս է բերվել 1000 գերի»:

Այնուհետև, ռուս ընթերցողին տեղեկացնելով, որ «Վանը հայկական թագավորության հնագույն մայրաքաղաքն է, Թուրքահայաստանի մշակութային և քաղաքական կենտրոնը», պարբերականը պարզաբանում է. «Ապստամբությունը Վանում սկսվեց ապրիլի 5-ին: Վռամյանի ձերբակալումից և Իշխանի դավաճանական սպանությունից հետո, Արամը Վանում բարձրացրեց ապստամբություն: Ապստամբները ամրացան Այգեստանում և Ավոյթարի գագաթին, որը տիրում է ողջ քաղաքի վրա»:

Ի հավելումն՝ «Իսկրի»-ն զետեղում է Վանի ապստամբությանն առնչվող մի շարք լուսանկարներ:

1915թ. ամռան ընթացքում շաբաթաթերթը տպագրում է նյութեր, որոնք լուսաբանում են իրադրությունը Կովկասյան ճակատում (մասնավորապես, Վանի վիլայեթին սահմանամերձ պարսկական գավառներում՝ Թավրիզում, Ուրմիայում), սակայն հայերի կացության մասին համարյա ոչինչ չի ասվում: «Պարսկաստանում» վերնագրով նյութին կից, այնուամենայնիվ, տրվում է մի լուսանկար, ուր պատկերված է, ըստ մակագրության, ռուս գեներալը, պարսիկ նահանգապետի ուղեկցությամբ, հայկական եկեղեցուց պատարագից հետո դուրս գալիս: Իսկ բուն նյութը ռուսական զորքերի մուտքը պարսկական տարածք բացատրվում է թուրքերի գործողություններով, որոնք թափանցել էին Վանի վիլայեթի սահմաններից պարսկական շրջաններ և, այսպիսով, սպառնում էին Ռուսաստանի կովկասյան սահմանին: Հենց այս պատճառով է, ըստ նյութի, որ ռուսները ստիպված են լինում դիմել «կտրուկ միջոցների» և, ջախջախելով Հալիլ-բեյի թուրքական ջոկատը, գրավել Թավրիզը և Ուրմիան:[10]

Ուշագրավ է նշված ժամանակահատվածում տպագրված գեներալ Յուդենիչին նվիրված հոդվածը, ուր կարդում ենք, ճիշտ է, հայերին չառնչվող, բայց նրանց նույնպես ոգեշնչող, հետևյալ տողերը.

«Թուրքիան հուսահատ ճիգեր է անում, որ փրկի իր գոյությունը: Թուրքական զորքերը հյուսիսային ուղղությամբ նորից սպառնում են հարձակումով: Սակայն նրանց փորձերը՝ կրկնել Էնվեր-փաշայի դեկտեմբերյան օպերացիան, հազիվ թե հաջողություն ունենա: Բացի բոլոր այլ նկատառումներից, դրա օգտին է խոսում նաև մեր կովկասյան բանակի փորձված ղեկավար, թուրքերի Կարաուրղանի և Սարիղամիշի ճմեռային ջախջախման կազմակերպիչ գեներալ Յուդենիչի փորձը:

Միայն հիմա է լիակատար ուրվագծվում թուրքական բանակի վիթխարի ջախջախումը, որը կատարվեց մեր զորքերի կողմից միամսյա ճակատամարտում՝ Էնվեր-փաշայի լավագույն զորագնդերի հետ: Այդ ամենածանր բնական պայմաններում կատարված ջախջախումը ուժերով, որոնք, ընդհանուր առմամբ, քանակով երկու անգամ զիջում էին հակառակորդին, նույնիսկ համաշխարհային պատերազմի մեր օրերին թվում է ինչոր մի գերբնական բան: Ծանր պահերին, երբ թուրքական հրոսակները հեղեղեցին մեր Անդրկովկասը 200 վերստից ավել ձգվող ճակատով մեկ, Սև ծովից մինչև Արաքս, և երբ իրենց ճանապարհին թուրքերը անսպասելի գտան տեղացի աջարների և քրդերի ավազակային հրոսախմբերի աջակցությունը, անհրաժեշտ էին մեծագույն ինքնատիրապետում և անխորտակելի հավատ ռուս զինվորի հանդեպ, որ նահանջելու հրաման չտրվեր: Գեներալ Յուդենիչի անունը, որն անձամբ ղեկավարում էր սարիղամիշյան և կարաուրղանյան օպերացիաները, այսուհետև ընդմիշտ ոսկե տառերով կգրանցվի մեր զինվորական պատմության մեջ: Նույնիսկ անմահ Սուվորովի շվեյցարական արշավանքը, որոշ տեսակետից, մնում է ստվերում՝ համեմատած այն հրաշքների հետ, որոնք կատարեցին մեր կովկասյան գերդյուցազները Սագանլուղի լեռնաշղթայի անմատույց բարձունքներում և Օլթի-չայի խոր ձորերում»:[11]

«Ռուս-թուրքական ռազմաճակատում» թղթակցության մեջ, որը տեղ է գտել հոկտեմբերյան համարներից մեկում (N 40), նկարագրվում է թուրքական բանակի անմխիթար վիճակը սարիղամիշյան մարտերից հե-

տռ՝ ծաղկող դասալքությունը, մասնավորապես շարքային զինվորականության մեջ, համաճարակները, թերասնումը, մահմեդական ասքերների մասսայական փախուստը բանակից:[12] Ուշագրավ է, որ այս նյութը ուղեկցվում է հայկական թեմային առնչվող՝ հայ գաղթականների, Վան քաղաքի ընդհանուր և հայկական թաղերի տեսարանների, Վասպուրականի տեսարժան վայրերի և այլ բազմաթիվ լուսանկարներով:

Սակայն ռուսական զորքերի հաջողությունները ռազմաճակատում միշտ չէ, որ հայերին փրկում էին թուրքերի և քրդերի բարբարոսություններից: «Իսկրի»-ի հաջորդ, 41-րդ, համարում արդեն զետեղված է ցնցող վերնագրով և լուսանկարներով հաղորդագրություն. «Հայերի ոչնչացումը Թուրքիայում»: Հենվելով հայկական «Մշակ» թերթի տեղեկատվության վրա, ռուսական պարբերականը գրում է. «...Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը հայտնել է Էջմիածնի կաթողիկոսին, որ առայսօր Թուրքիայում կոտորվել է 850000 հայ: Ինչպիսի աեռվ են լցված այդ սառը թվերը: Անզեն մարդկանց սպանում, ոչնչացնում են, ինչպես ճանճերի, միայն այն բանի համար, որ նրանք ձգտում են ազատության ...Թուրքիայում հայերի ոչնչացման ծրագիրը, որը մշակված է «սահմանադրական» երիտթուրքերի կողմից գերմանացի կուլտուրտրեգեր սպաների աջակցությամբ, իրականացվում է պարբերաբար, և շատ հավանական է, որ մոտ ապագայում կգա մի օր, երբ Թուրքահայաստանում չի մնա ոչ մի հայ: Հայերի քանակը Թուրքիայում, վերջին վիճակագրության տվյալներով, չի գերազանցում 1200000 հոգուց: Եթե ենթադրենք, որ Ռուսաստան փախած հայերի թիվը հասնում է 200000 մարդու, ապա, հետևաբար, երկրում մնացել է 300000 հայերից ոչ ավել»:[13]

Ռուս ընթերցողին ներկայացված դաժան լուսանկարների մակագրությունները խոսում են թուրքերի ոճրագործությունների մասին. «Տանջամահ արված հայուհու դիակը: Շրթունքները և ականջները կտրած են, ողջ մարմինը կտրատված», «Տանջամահ արված հայուհին և նրա երեխան», «Թախծալի ճամփա: Հայ գաղթականների քարավանը՝ քրդերի հարձակումից հետո»... Մեկնաբանություններն, ինչպես ասում են, ավելորդ են...

Պատերազմական գործողությունների ընթացքն անմիջականորեն անդրադառնում է, առաջին հերթին, արևմտահայության վիճակի վրա: Ռազմական հաջողություններն ուղեկցում էին մեկ՝ ռուսներին, մեկ՝ թուրքերին: Արևմտյան Հայաստանը՝ երկու կրակի միջև:

Մոսկովյան շաբաթաթերթը 1915թ. նոյեմբերի 1-ի «Թուրքիայի հետ պատերազմի մեկ տարին» հոդվածում արձանագրում է. «Հոկտեմբերի 16-ին, առավոտյան ժամը 7-անց 25 ռոպեին, լրացավ տարին այն պահից, երբ թուրքա-գերմանական նավերը, առանց պատերազմի հայտարարման, հարձակվեցին Սև ծովի ռուսական ափերի չպաշտպանված բնակավայրերի վրա: Նույն օրը, իբրև պատասխան իրենց ավազակային հարձակմանը, ռուսական Կովկասյան բանակի զորքերին հրաման տրվեց անցնել սահմանը և գրոհել թուրքերին: Սկսելով պատերազմը գերմանացիների դրդմամբ, ճիգեր թափելով ոչ թե իրենց, այլ նրանց օգտին, թուրքերը տարան աեռելի կորուստ բոլոր տեսակետներից: Համարյա ամբողջ ժամանակ, ոչ շատ բացառություններով, պատերազմը վարվում էր իրենց տարածքում: Մարդկային և նյութական կորուստներն անհամար են: Եվ ի՞նչ՝ արդյունքում: Արդյունքում՝ առայժմ ծովափնյա արժեքավոր մասի կորուստ, Թուրքահայաստանի հսկայական տարածքի կորուստ: Եվ ոչ մի

հույս ապագայում, չխոսելով արդեն Թուրքիայի ներքին քայքայման մասին, որն առաջացավ նրա ինքնակոչ միջամտությամբ համաեվրոպական պատերազմին»:[14]

Իհարկե, պարբերականը 1915թ. աշնանը չէր պատկերացնում, որ ռուսական զենքի հաջողությունները չեն խանգարի եվրոպական դիվանագիտությանը և մեծ տերությունների ղեկավարներին մի քանի տարի անց ապահովել Թուրքիայի «տարածքային ամբողջականությունը»: Բայց այն ժամանակ, 1915թ. աշնանը, հայորդիները, կարդալով նման հրապարակումներում ոգևշնչող տողեր դեռ հավատում էին ազատագրված Հայրենիքի գաղափարին... Ունեին հիմքեր հավատալու...

«Իսկրի»-ի այդ նույն համարում գտնում ենք նաև «Գաղթական հայերը» հոդվածը: Պարբերականը, մասնավորապես, հավաստում է. «Այս պատերազմում աննկարագրելի տառապանքներ բաժին ընկան թուրքահայերին: Վանից ռուսական զորքերի նահանջից հետո անզեն հայ բնակչությունը, երկյուղելով թուրքական զորքերի և զինված քրդական հրոսակախմբերի կողմից նոր ջարդերից, նետվեց դեպի Ռուսաստանի սահմանները, ուղղվելով Էջմիածին, ուր սույն թվի հուլիսի 20-ի դրությամբ հավաքվել էր մինչև 100000 մարդ՝ բաց երկնքի տակ, քաղցած, հյուծված, հիվանդ: Այսպիսի մեծ անապաստան զանգվածի անսպասելի ժամանումը բոլորին հանկարծակիի բերեց: Գաղթականների ժամանման պահին Էջմիածնում էին միայն Մոսկովյան Հայկական կոմիտեի և «Եղբայրական օգնության» կոմիտեի բժշկասանիտարային ջոկատները: Հետագայում եկան և հայկական այլ կազմակերպություններ: Ռուսաստանի սահմաններում ապաստանած հայ գաղթականների ընդհանուր քանակը 250000 մարդ է»:[15] Հայ փախստականներին պատկերող լուսանկարներն ավելի համոզիչ և արտահայտիչ են դարձնում հրապարակված նյութը:

Հարկ է նշել, որ հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայության, վիճակի մասին «Իսկրի» շաբաթաթերթում տպագրված հոդվածները և հաղորդագրությունները, գրված են ջերմությամբ, կարեկցանքով, համակրանքով դեպի դաժան տառապանքների դատապարտված անձինք և առանձնանում են անաչառությամբ՝ հատկություն, որն այդ ահավոր ժամանակաշրջանում ոչ բոլոր ռուսական և օտարերկրյա լրատվամիջոցներին էր բնորոշ: Թուրքամետ մամուլը կեղծում էր Արևմտյան Հայաստանի իրադարձությունները, ցեղասպանությունը, բացատրելով կատարվողը միայն «պատերազմական վիճակով», «առանձին» զինվորների և քաղաքացիական պաշտոնյաների «չարաշահումներով», քրդերի և թուրքերի «խավարամիտ, վայրենի» «զանգվածների» թշնամությամբ՝ քրիստոնյա հայերի նկատմամբ:

Օսմանյան կայսրության ողջ տարածքով շարունակվում էր Հայոց ցեղասպանությունը: Եվրոպան և Ռուսաստանը «զբաղված էին» պատերազմով, որն, ի լուր աշխարհի, հայտարարված էր որպես «փոքր ժողովուրդների» ճակատագիրը տնօրինելու և նրանց անկախությունն ապահովելու համար մղվող պատերազմ: Իսկ հայ ժողովուրդը, այդ «փոքրերից» մեկը, մինչ այդ արյունաքամ էր լինում սեփական հողի վրա: Արևմտյան Հայաստանը ամայանում էր, հայ ժողովրդի բեկորները ցիրուցան էին լինում աշխարհով մեկ... Մամուլը, որը քաղաքակիրթ աշխարհում ընդհանրապես միշտ էլ հանդիսացել է հասարակական-քաղաքական և մտավորա-

կան կյանքն արտացոլող յուրահատուկ հայելի, ձգտում էր իրական պատկերը տալ այն արհավիրքների, որոնք բաժին ընկան հայ ժողովրդին:

Տպագիր խոսքը, անշուշտ, կատարում էր իր կարևոր դերը՝ հասարակությանը տեղյակ պահում Հայաստանում կատարվող իրադարձություններին, սակայն ո՛չ սուր դատապարտող հոդվածները, ո՛չ ազդեցիկ պարբերականներում ռուս և եվրոպացի հանրահայտ գործիչների զայրույթով լի հրապարակային ելույթներն ի զորու չէին, ավաղ, վերջ տալ ցեղասպանությանը... «Խաղաղության բանալիները» գտնվում էին «մեծ տերությունների» ձեռքերում, որոնց համար հայերի արյունը այնքան էլ բարձր գին չունէր, թեև անպակաս չէին ամպագոռոգոռ հայտարարությունները: Գերտերություններն իրենց հաշիվներն ունեին ետպատերազմյան աշխարհը նոր «ազդեցության գոտիների» բաժանելու հարցում... Այդպիսին էր իրողությունը...

Այսուհանդերձ՝ խոստովանենք, որ ռուսական մամուլը և, մասնավորապես, մինչ օրս հայ պատմագիտության մեջ չլուսաբանված, մոսկովյան «Իսկրի» շաբաթաթերթի հրապարակումներն իրենց դրական և ազդեցիկ դերն ունեցան ռուսաստանյան լայն հասարակությանը հայ ժողովրդի ողբերգությանը իրազեկ դարձնելու գործում, առիթ տալով անծայրածիր կայսրության տարբեր խավերի մարդկանց ջերմությամբ և կարեկցանքով ընդունել այն բազմահազար հայ գաղթականներին, որոնք կարեկցանք գտան Ռուսաստանում, բարեկամ և դավանակից ռուս ժողովրդի մեջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Շաբաթաթերթի 1914-1915թթ. հավաքածուն պահպանվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվային ֆոնդում (N11):
[2] «Իսկրի», 1914, N 44, նոյեմբերի 9, էջ 352 (ռուս. լ.):
[3] Նույն շաբաթաթերթը, 1914, N 46, նոյեմբերի 23, էջ 364-365:
[4] Նույն շաբաթաթերթը, N 4, հունվարի 25, էջ 28-29:
[5] Նույն շաբաթաթերթը, N 5, փետրվարի 1, էջ 33:
[6] Նույն շաբաթաթերթը, N 6, փետրվարի 8, էջ 42 - 43:
[7] Նույն շաբաթաթերթը, էջ 48:
[8] Նույն շաբաթաթերթը, N 10, մարտի 8, էջ 80:
[9] Նույն շաբաթաթերթը, N 20, մայիսի 24, էջ 160:
[10] Նույն շաբաթաթերթը, N 24, հունիսի 21, էջ 186:
[11] Նույն շաբաթաթերթը, N 25, հունիսի 28, էջ 193:
[12] Նույն շաբաթաթերթը, N 40, հոկտեմբերի 11, էջ 316 - 317:
[13] Նույն շաբաթաթերթը, N 41, հոկտեմբերի 18, էջ 323:
[14] Նույն շաբաթաթերթը, N 43, նոյեմբերի 1, էջ 337:
[15] Նույն շաբաթաթերթը, էջ 338:

Резюме

Отголоски геноцида армян на страницах московского еженедельника "Искры" (1914-1915гг.).

Роберт Багдасарян

В трагической судьбе армянского народа в годы Первой мировой войны и геноцида армян 1915г. российская периодическая печать относилась сочувственно, давая на своих страницах в основном положительную и объективную информацию, представляла подлинную картину происходивших в Западной Армении событий. Художественно-литературное иллюстрированное еженедельное приложение "Искры" известной и авторитетной московской газеты "Русское слово" в течение 1914-1915гг. также дало довольно широкую и верную панораму войны, положение армян, резни и депортации мирного армянского населения Западной Армении.

Summary

Echoes of the Armenian Genocide in the Moscow Weekly "Iskry" (1914-1915).

Robert Baghdasaryan

The tragic fate of the Armenian people during World War I and the 1915 Armenian Genocide were treated by the Russian periodical press with sympathy, basically by printing positive and objective information and presenting the real picture of the events that took place in Western Armenia.

"Iskry", the artistic and literary illustrated weekly supplement of the famous and authoritative Moscow newspaper "Russkoye slovo" also presented a true and broad picture of the war in 1914-1915, the situation related to the Armenians, massacres and the deportation of the peaceful Armenian population of Western Armenia.